ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2023 թ.

Անտոն Իվչենկոյին

(E-mail: ant.ivchenko@gmail.com)

Ձեր 26.09.2023 թ.-ի թիվ Մ-14226-2023 դիմումին.

Հարգելի Անտոն Իվչենկո

Ձեր դիմումում բարձրացված հարցերը ուսումնասիրվել են մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնում:

Հարց 1-ին՝ Արդյո՞ք աշխարհազորում կարող են ընդգրկվել Վանաձոր համայնքում փաստացի բնակվող, սակայն չհաշվառված ՀՀ քաղաքացիները:

Պատասխան՝ Ոչ, համաձայն «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 10-րդ կետի (Աշխարհազորային պայմանական բրիգադների և գումարտակների համալրումն աշխարհազորայիններով (այսուհետ նաև՝ աշխարհազորայինի հավաքագրում) տարածքային սկզբունքով իրականացնում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանումները՝ պահեստազորում հաշվառված և պատերազմական ժամանակի հաստիքների չկցագրված քաղաքացիներից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ համապատասխան համայնքում (Երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների) հաշվառված քաղաքացիներից):

Հարց 2-րդ՝ Հաշվի առնելով, որ Վանաձոր համայնքը չունի ղեկավար և համապատասխանաբար համայնքի ղեկավարի տեղակալներ, ո՞վ է իրականացնում աշխարհազորային բրիգադի ղեկավարումը:

Պատասխան՝ Քանի որ Դուք այս հարցով դիմել եք նաև Վանաձոր համայնքի ղեկավարին, վերջինս Ձեզ կպատասխանի:

կատ. Ա.Հակոբյան
հեռ. /0322/ 4-35-68

Հարց 3-րդ՝ Լոռու մարզպետի ո՞ր տեղակալն է իրականացնում աշխարհազորային զորամիավորման ղեկավարումը:

Պատասխան՝ ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գոռ Ասրյանը:

Հարց 4-րդ՝ Արդյո՞ք իրականացվում է Պաշտպանության մասին ՀՀ օրենքի հոդված 29.1-ի 13-րդ մասով նախատեսված պատրաստական աշխատանքները և արդյո՞ք հնարավոր է այդ աշխատանքներին մասնակցությունը, Վանաձոր համայնքի աշխարհազորի կազմում ներգրավվելու անհնարինության դեպքում:

Պատասխան՝ Նշված աշխատանքները չեն իրականացվում, քանի որ դեռ պայմանագրերի կնքման գործընթացը չի ավարտվել, իսկ հարցի 2-րդ մասով՝ Վանաձոր համայնքի աշխարհազորի կազմում ներգրավվելու անհնարինության դեպքում, համաձայն «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 10-րդ կետի, նշված աշխատանքներին մասնակցելն անհնար է:

29/09/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Ա.Հակոբյան
հեռ. /0322/ 4-35-68